ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«12» 10 2018թ.

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N ԱՀ 038349

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե *իրավաբանական վարչություն*

/կառուցվածքային ստորաբաժանման անվանումը/

Հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ա. Գալստյան

/արգելանք դնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը/

և Թ.Ասրյան

/արգելանք դնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը/

հանձնարարում է

Ա/Ձ Հրայր Կարապետյան *ՀՎՀՀ 42006671* պատկանող գույքի վրա

/հարկ վճարողի անվանումը, ՀՎՀՀ, ԱՄՀ վճարողների դեպքում՝ նաև ԱՄՀ վճարողի հաշվառման համարը/

ընդհանուր՝ 916.200 դրամ

/չկատարված հարկային պարտավորության չափը հանձնարարագիրը հրապարակելու օրվա դրությամբ/

չկատարված պարտավորությունների չափով արգելանք դնել:

Հիմք՝ ՀՀ Հարկային օրենսգրքի 429, 430, 431 հոդվածները:

Գ. ԱՆԱՆՅԱՆ

Հարկ վճարողի իրավունքները.

1. Գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինման նպատակով դիմել հարկային մարմին.

2. Ծանոթանալ արգելադրման վարույթի նյութերին, դրանցից քաղվածքներ կատարել և ստանալ պատճեններ.

3. Ներկայացնել միջնորդություններ, փաստարկներ ու առաջարկություններ.

4. Արգելադրման վարույթի ընթացքում հանդես գալ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով.

5. Ներկայացնել առարկություններ.

6. Հայերենին չտիրապետելու դեպքում հրավիրել թարգմանիչ.

7. Բողոքարկել ընդունված որոշումները և արգելանք իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները.

Հարկ վճարողի պարտականությունները.

1. Մասնակցել արգելադրման գործողություններին.
2. Չխոչընդոտել արգելադրում իրականացնող պաշտոնատար անձանց գործողություններին.
3. Չվատնել, չօտարել, չթաքցնել կամ ապօրինաբար մեկ ուրիշին չհանձնել արգելադրված գույքը:

Ինձ բացատրված են իմ իրավունքներն ու պարտականությունները, ստացա հանձնարարագրի օրինակը

.....

/ստորագրություն, հարկ վճարող պաշտոնատար անձի անուն, ազգանունը, ստացման ամսաթիվը/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան «17» հոկտեմբերի 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 038349/1

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետ Արտակ Գալստյանս և նույն բաժնի գլխավոր մասնագետ Թադևոս Ասրյանը

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 17.10.2018թ-ի թիվ ԱՀ 038349 հանձնարարագրի, ուսումնասիրելով 17.04.2018թ-ի թիվ 1502632 վարչական ակտը և հարկ վճարողի վերաբերյալ նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

<Հրայր Կարապետյան> Ա/Ձ-ի (ՀՎՀՀ 42006671, հասցեն՝ Կոտայքի մարզ, Նոր Հաճն Տոռոզյան փող. 6/18, պետ. գրանցման համար՝ 80.01255, անձ. AR0241503) վերաբերյալ 17.04.2018թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ օպետատիվ հետախուզության վարչության կողմից կայացվել է թիվ 1502632 ստուգման ակտը 1.018.000 դրամի չափով:

Նկատի ունենալով, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարվել է 101.800 դրամի չափով վճարում, ուստի 17.04.2018թ-ի թիվ 1502632 ստուգման ակտի շրջանակներում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 916.200 դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 429-րդ, 430-րդ և 431-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Արգելանք դնել հարկ վճարող <Հրայր Կարապետյան> Ա/Ձ-ի /ՀՎՀՀ 42006671/ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա **916.200 դրամի** չափով:

Նրան արգելել արգելադրված գույքը օգտագործել և /կամ/ տնօրինել և /կամ/ տիրապետել:

Որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկել.

1.ՀՀ բոլոր առևտրային բանկերին

2. <Հրայր Կարապետյան> Ա/Ձ-ին

Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում, ինչպես նաև արտադատական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

Սույն որոշումը ստանալու պահից Դուք նախազգուշացված եք արգելադրված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Ա. Գալստյան _____ _____ _____
/արգելանք դնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը/ /ստորագրությունը/

Թ. Ասրյան _____ _____ _____
/արգելանք դնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը/ /ստորագրությունը/

ստացա որոշման պատճենը _____ _____
/ստորագրությունը/ /հարկ վճարող պաշտոնատար անձի անունը, ազգանունը/

_____
Ամսաթիվ